




ԶԱՎԵՆ ԱԲՂ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ք Ա Ր Ո Ջ

«Արդ արձակես զծառայս քո, Տէր, ըստ բանի քում ի խաղաղութիւն. Զի տեսիմ աչք իմ զփրկութիւն քո» (Ղուկ. Բ 29):

Սիրելի հաւատացյալներ, երեկ Հայ Առաքելական Ս. Եկեղեցին տոնեց իր Տէրունական տոներից մեկը՝ Տյառնընդատաջի տոնը, որը հիշատակությունն է մանուկ Հիսուսի 40 օրական դառնալուց հետո տաճար բերվելուն: Այդ միջադէպի մասին մեզ պատմում է Ղուկաս ավետարանիչը: Մի պատմություն, որը մեզանից հեռու է մոտ երկու հազար տարիներ: Հին Իսրայելի ժողովուրդը ուներ մի սովորություն, որի համաձայն Իսրայելացիների անդրանիկ արու զավակը երբ դառնում էր 40 օրական, նրան բերում էին տաճար՝ ընծայելու տաճարին, որոնք էլ հետագայում դառնում էին տաճարի սպասավորները: Այդ ավանդույթը ուներ մեկ այլ խորհուրդ ևս. ծննդաբերող կանայք 40 օր անմաքուր էին համարվում և իրավունք չուներին Աստուծո տաճար մտնելու: Միայն 40 օր հետո, երբ իրենց արու զավակի հետ գալիս էին տաճար, այնտեղ հատուկ ծեսով մաքրվում էին: Սակայն երբ Մովսէս մարգարեն Ղևիի ցեղը ընտրեց որպէս տաճարի սպասավորներ, այլևս կարիք չկար առաջնեկների ընծայումը տաճարին, սակայն ավանդությունը շարունակվեց: Նորից 40 օրական արու զավակներին իրենց մոր հետ բերում էին տաճար և մանուկների փոխարեն տաճարին էին ընծայում մեկ տարեկան գառնուկ և

երկու տատրակ՝ որպէս փրկագին: Այս սովորության համաձայն հյուսն Հովսէփը իր կնոջ՝ Մարիամի և քառասնօրյա մանուկ Հիսուսի հետ գալիս են Երուսաղեմի տաճար: Տաճարի ծերունագարդ քահանաներից մեկը, որի անունն էր Սիմոն, տեսիւք էր ունեցել, որ մինչև չտեսնի Իսրայելի Փրկչին, մահ չպետք է ունենա: Սիմոն ծերունին հեռվից տեսնելով մանուկ Հիսուսին՝ Իսրայելի Փրկչին, ընդառաջ է գնում, դողդոջուն ձեռքերով իր գիրկն առնում մանկանը, ծունկի իջնում Աստուծո խորանի առաջ, փառք տալիս Աստծուն և ի խորոց արտի բացականչում. «Արդ արձակես զծառայս քո, Տէր, ըստ բանի քում ի խաղաղութիւն. Զի տեսիմ աչք իմ զփրկութիւն քո»:

Մեծ ավետիս է այսօր. լույս ծագեց հեթանոսներին: Վերջապէս կատարվում է ծեր քահանայի տարիներով փայփայած երազանքը, դալկացած ծերունին երջանկությամբ և սիրահոժար պատրաստ է հեռանալ այս անցավոր կյանքից դէպի Աստուծո հովիտեանկանություն, քանի որ փրկված էր տեսնում Իսրայելի ժողովուրդը: Այս երջանկահույս միջադէպը մեր լուսափայլ Հայրերի կողմից հաստատվել է որպէս Տյառնընդատաջի տոն: Այս տոնը մեր ժողովրդի ավանդական տոների շարքում իր ուրույն հետաքրքրությունն ունի: Ինչպէս մի շարք այլ տոներ, այս տոնը նույնպէս ստացել է ազգային նկարագիր, և նրա խորը արմատները սնվում են հեթանոսական շրջանից:

Մեր ժողովուրդը ավանդապաշտ է ի հնուց անտի, հատկապես հեթանոսական շրջանում եղել են այնպիսի ժողովրդական տոներ, որոնք արմատավորվել են ժողովրդի կյանքում: Անգամ քրիստոնեությունը ընդունելուց հետո այդ սովորությունները միաձուլվելով քրիստոնեական ավանդույթների՝ գոյատևեցին մինչև մեր օրերը: Այդ տոներից են Նավասարդը և Վարդավառը: Տյառնընդառաջի տոնը անվանվել է Ասև Տերմանես, որպես նոր իմաստավորում ժողովրդի խոսակցական լեզվում առկա դրոճ-դեզ բառի: Օրվա խորհուրդը թաքնված է տոնի անվան մեկնության մեջ. Տիրոջը ընդառաջ, կամ Տերը տեսնելու նշանակությանը: Այդ տոնի օրը նորահարսերի համար խարույկ է վառվում, որի կրակը առնվում է եկեղեցուց: Խարույկի շուրջը կատարվում է խրախճանք և նորահարսերը ցատկում են կրակի վրայից:

Կարծում եմ մեր հավատացյալներից շատերը չգիտեն, թե ինչ խորհուրդ ունի Տյառնընդառաջի օրվա կրակի խորհուրդը և որտեղից է ծնունդ առել այդ սովորությունը:

Ինչպես գիտեք, սիրելի հավատացյալներ, կրակը եղել է հեթանոսական պաշտամունքի առարկա: Այդ հասկացողությունից առաջացել է օջախի, ընտանիքի խորհուրդը: Կրակը ունի նաև մեկ այլ կարևոր հատկություն. ինչպես ջուրը, կրակը նույնպես ունի մաքրման խորհուրդ. աղբը այրվելով ոչնչանում է, ազնիվ մետաղները մաքրվում են կրակի միջոցով: Հիշենք մարգա-

րեի հետևյալ արտահայտությունը. «Ինչպես ոսկին մաքրվում, ազնվանում է կրակի քուրայի միջով անցնելով, այնպես էլ մարդու հոգին ազնվանում, մաքրվում է կյանքի տառապանքից բովով անցնելով»: Աստվածաշունչ մատյանի Ղևտացիների գրքում խոսվում է զոհաբերության ձևերի մասին. մեղքի համար մատուցվող զոհը ողջակիզվում էր: Մեղք գործած անձի մեղքերը փոխանցվում էին զոհին, որին ողջակիզելով, ենթական ազատվում, մաքրվում էր իր մեղքերից: Հետագայում ողջակեզի գաղափարով ստեղծվում է մոմ վառելու գաղափարը: Հավատացյալի մեղքը անցնելով մոմին, այրվում է և մեղավորը մաքրվում է իր մեղքերից: Ահա այս նույն խորհուրդն է թաքնված Տյառնընդառաջի խարույկի մեջ: Նորահարսերը, որ ծննդաբերությունից հետո անմաքուր են, կրակի վրայով ցատկելիս մաքրվում են: Միաժամանակ կրակը Աստուծո խորհրդանիշն է: Այն խորհրդանշում է Աստուծո մաքրությունը, և Աստուծով մաքրվելը: Աստված առաջին անգամ Մովսեսին հայտնվում է կրակի միջից և 40 տարի շարունակ Իսրայելի ժողովրդին առաջնորդում էր կրակի շիթն ու ամպը:

Արդ, սիրելի հավատացյալներ, թող մեր մեղքերը խորհրդապաշտաբար փոխանցվեն Տյառնընդառաջի խարույկին և այրվելով մաքրվեն, որպեսզի մեղքերից ձերբազատված կարողանանք քայլել մեր Տեր Հիսուսի արդարության ճանապարհով, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից, ամեն:

